

# «ԼԱՀԱՆԳ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ»Ն ԳԵՐՄԱՆԵՐԷՆՈՎ

Posted on December 28, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



✖ **«Նոր խոսք»- ի Հարցազրույցը գրող Սամվել Հովասափյանի հետ, 29 Դեկտեմբեր 2011**



**"Իմ գրքերով և առայժմ Շահնուրով ավելի հետաքրքրված եմ գերմանացիները, քան թե հայուհայրերը:"**

**«Նոր խոսք».** Հարգելի պրն. Հովասափյան, դուք ապրում ու ստեղծագործում եք Բեռլինում: Ճանաչված գրող Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, որը հրատարակվել է վերջերս, թարգմանվել է գերմանաերենի Ձեր կողմից : Խնդրում ենք պատասխանել մեր մի քանի հարցերին՝ վեպի հրատարակման վերաբերյալ, որոնք կարծում ենք հետաքրքիր կլինեն մեր ընթերցողների համար:

1927- 29 թվականներին, Փարիզում, հայերեն լեզվով գրված «Նահանջը առանց երգի» վեպը ի՞նչ այժմեականություն ունի այսօր, կամ՝ վեպի գրված ժամանակի հայության կյանքի և մեր օրերի հայության փաստացի վիճակի մեջ ի՞նչ զուգահեռներ եք տեսնում:

✖ **«Նոր խոսք»- ի Հարցազրույցը գրող Սամվել Հովասափյանի հետ, 29 Դեկտեմբեր 2011**



**"Իմ գրքերով և առայժմ Շահնուրով ավելի հետաքրքրված եմ գերմանացիները, քան թե հայուհայրերը:"**


**«Նոր խոսք».** Հարգելի պրն. Հովասափյան, դուք ապրում ու ստեղծագործում եք Բեռլինում: Ճանաչված գրող Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, որը հրատարակվել է վերջերս, թարգմանվել է գերմանաերենի Ձեր կողմից : Խնդրում ենք պատասխանել մեր մի քանի հարցերին՝ վեպի հրատարակման վերաբերյալ, որոնք կարծում ենք հետաքրքիր կլինեն մեր ընթերցողների համար:

1927- 29 թվականներին, Փարիզում, հայերեն լեզվով գրված «Նահանջը առանց երգի» վեպը ի՞նչ այժմեականություն ունի այսօր, կամ՝ վեպի գրված ժամանակի հայության կյանքի և մեր օրերի հայության փաստացի վիճակի մեջ ի՞նչ զուգահեռներ եք տեսնում:

**Սամվել Հովասափյան.** Վեպի այժմեականությունը դա հայ ժողովրդի ներկային և ապագային վերաբերող հարցերի, հայ ժողովրդի տարբեր սերունդների դեմ ծառայած

խնդիրների նույնությունն է, որը այսօր ավելի սուր է դրված, ավելի հրատապ է: Բայց նախ մի քանի մեջբերումներ Շահնուրի վեպից.

«... Վհատ, թոյլ և ողողումեն առաջ իսկ կղզիացած սա հոգին, ...Կը խորշի, կը սոսկա հպատակութեան գաղափարեն, պզտիկութիւն կը համարէ ուրիշի մտածումը բաժնելով միաբանիլ ու գործակցիլ անոր, երբոր հրամայողը ինքը չէ: Ինք ինք է և ինք բան մը չէ: ...»

«...Այո, այս տիպարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծննունդ չէ. սակայն մինչդեռ անցեալի մէջ կարելի էր մասամբ զինքը անտեսել, իր վատառողջ մեղկացումը  չէզոքացնել, թողելով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դերը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ անտարբեր մնալ: Ոչ թէ որովհետև այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետև այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետև կայ բան մը ավելի ճակատագրական, ավելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը Հայերուն: Կռիվը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նույնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կուգայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգայ: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամեն բան: ...»

«...Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կ'նահանջէ լեզուն, կ'նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կ'նահանջենք բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Այս «Տառապող հոգո ճիչը» (պրոֆեսոր Արծրուն Ավագյան, Երևան, տես համապատասխան հոդվածը), Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, եզակի է հայ գրականության մեջ: Թե որպես գրական գործ, թե որպես վեպ, թե որպես հայելի, որը Շահնուրը դեմ է պահել հայության սերունդներին, նրանց ցույց տալով իրենց բացթողումները, իրենց սխալները, երբեմն նույնիսկ վիրավորական խոսքերով, քննադատական սուր մոտեցումով: Բայց գրողի հետ միասին տառապող ընթերցողը դրանք վիրավորական չի ընդունում, չնայած որ ժամանակին գրողը այդ պատճառով տարբեր կողմերից քննադատվել և հարձակումների է ենթարկվել: Ո՞ւր է մեր օրերի այն գրողը, ով այսօր նման խոսքեր կուղղեր հայությանը, կփորձեր նրան շարժել, նրան ետ պահել այն սոսկալի, ազգակործան նահանջից, որը ընթանում է մեր օրերում, ավելի մեծ թափով, մեր աչքի առաջ և մենք ազգովին հուսալքված, ապակողմնորոշված, բարոյալքված, ձեռքներս ծալած, այո արդեն հանձնված դիտում ենք այդ ընթացքը: Այս ընթացքը նոր չէ, որ սկսվել է նաև Հայաստանում մեր ապերախտ իշխանավորների ազգակործան գործունեության պատճառով: Վկայակոչենք Շահնուրին.

«...Մեր այն թագաւորը որ կը կոչվեր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, հաւաքեց իր երկրին բոլոր այն անձերը որոնց համար կ'ըսէին թէ խելացի են, իմաստուն, պայծառաստեւ և լուսամիտ: Հաւաքեց բոլորն ալ ու ջարդեց...»

«... Յաջորդ թագաւորը որ կը կոչվեր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, կոյր էր...»

Սրանք վեպում Սուրենի տառապանքով ասված խոսքերն են: Թե որքա՛ն զուգահեռներ կան անցյալի և այսօրվա մեր իրականության մեջ, թե որքա՛ն ճշմարտություն, դա կարելի է նկատել նման դիպուկ խոսքերի յուրաքանչյուր բառում:

**Նս.** Ո՞րն է այն կարևոր պատգամը, որ վեպը կարող է հաղորդել գերմանախոս ընթերցողին:

**Սամվել Հովասափյան.** Նախ հարցը այսպես ամբողջացնեմ. Ինչո՞ւ հատկապես այս վեպը ընտրեցի թարգմանության համար: Իմ կարծիքով Շահնուրի այս վեպը հենց այն հայ վեպն է, որ իր գրական, իր լեզվական, պատկերային շարահյուսական բարձր արժանիքներով, իր մարդկային անժամանց թեմաների արծարծումով, որոնք են՝

-սերը,

-հայրենագրկության անդրադարձը մարդկանց հոգեբանության, ապրելակերպի, վերաբերմունքի և առօրյա գործընթացի վրա,

-մեր օրերում օտարացիներին բնիկ հասարակության մեջ ընդգրկման (ինտեգրացիոն) ընթացքի հրատապ քարոզչությունը,

-ինչպես նաև մարդ անհատի ներաշխարհի վերլուծությունը, ով վեպում Պետրոսի օրինակով փորձում է մարդկային ընդհանուր ծախսողություններում, նախ իր խորքը նայել, այնտեղ փնտրել դրանց պատճառները:

Ահա այս արժանիքներով օժտված Շահնուրի վեպը կարելի է անվարան հանձնել գերմանացի խստապահանջ ընթերցողի քննադատությանը: Եվ հետո, ինձ թվում է՝ մեր այսօրվա հայ սփյուռքի իրականության պարագայում, երբ հայությունը այլևս ի վիճակի չէ մայրենի լեզվով հաղորդակցվել հայ գրականության հետ, պետք է նրան իր տիրապետող լեզվով մատուցել այն, նա հետաքրքրվա՞ծ է, կամ կհետաքրքրվի՞ դրանով, սա արդեն բազմաթիվ անհայտներով և ինձ թվում է՝ մեր ուժերից վեր, անլուծելի խնդիր է:

**Նս.** Դուք արևելահայ եք: Արևմտահայերենով գրված վեպի թարգմանության

*Ժամանակ առանձնահատուկ դժվարությունների չհանդիպեցի՞ք:*

**Սամվել Հովասափյան.** Լեզվական դժվարություն թերևս շատ քիչ, բայց պետք է բացատրություններ գտնեի շատ անհայտ օտար բառերի, անունների և պատմական դեպքերի համար, որոնց Շահնուրը շատ կցկտուր, երբեմն միայն մի կարճ նախադասությունով է անդրադարձել:

**ՆԽ.** *Գերմանախոս հայերը հետաքրքրված են գրքի հրատարակմամբ:*

**Սամվել Հովասափյան.** Ո՞ր հայերը, ո՞ր միությունները, ո՞ր մտավորականությունը, նահանջող, հանձնված հայի համար այլևս սեփական գրականություն գոյություն չունի, մանավանդ այն պարագայում, երբ դրա հեղինակը ինքը չէ: Իմ փորձից կարող եմ հետևյալը ասել՝ իմ գրքերով և առայժմ Շահնուրով ավելի հետաքրքրված են գերմանացիները, քան թե հայությունը:

**ՆԽ.** *Շնորհակալություն հարցազրույցի համար և հաջողություններ Ձեր ստեղծգործական աշխատանքներում:*

